Ցոյնք քակեցին զԳերեզմանն Քրիստոսի մինչ 'ի վիմափոր այրն եւ զդանձարանն, այսինքն տեղի Հրեշտակի վիմի, մինչ 'ի հիմն, և փակեցին զշրջապատս նորա տախտակաւ. խափանեցաւ տեղի պատկերին և կանթեղին Հայոց։ Իսկ Թէոդորոս Պատրիարք թախանձանօք խնդրէր 'ի Փոխանորդէն փութով դարձուցանել զԴիոնէսիոս վարդապետ յԱթոռն, զի չունէր զոք իրրև զնա վարել զսպաշտօն Քարտուղարութեան և զայլ կարեւոր գործս, բայց աղդային երեւելիք ընտրեալ էին զարս 6 և Դիոնէսիոս ընդ նոսա քննել զհաշուետուսարն Ս. Աթոռոյն, զոր առաքեալ էր յառաջագոյն, և զկնի աւարտելոյ զայն գործ՝ խոստացան առաքել ընդ տումարին ('ի 12—27 Նոյեմբերի)։

Գործ Կուսակալին ընդդէմ էր կամաց քաղաքացի այլազգեաց եւ Եէնիչէրի զօրաց՝ որք նստէին 'ի բերդն. տաղտկացեալ սոցա 'ի Մղրըսի կոչեցեալ զօրաց, մեկնեցան անտի որդւովք և ընտանեօք, և ցրուեցան յայլ եւ այլ տեղիս քաղաքին։ Եւ սպա ժողովեալ 'ի դատարան խնդրէին 'ի մեծամեծացն այլազգեաց հանել անտի զզօրսն և տալ ինքեանց զբերդն. ստիպէին և զՑոյնս՝ զի որպէս առիթ եղեն բնակելոյ զօրաց անդ, այժմ եւս ստիպեսցեն զԿուսակալն հանել զնոսա անտի։ Ցոյնք խոստացան 'ի վերին երես կատարել զխնդիր նոցա. և նոքա լռեցին աւուրս 20։ Իրրեւ տեսին Եէնիչէրիք թէ անփոյթ արարին Ցոյնք զխնդրով իւրեանց՝ և պատաղեալ են 'ի գործս չինութեան, խորհրդով գլխաւորաց քաղաքին մասն առ մասն մտին 'ի Ս. Յարութիւն ('ի 17 Դեկտեմբերի) մինչեւ լցաւ թիւ նոցա իրրեւ հազար, որ և յանկարծ հանին անդ չիսթ մեծ և աղմկաւ լցին զտաճարն, և հանեալ զզէնս իւրեանց դիմեցին 'ի վերայ Ցունաց և սկսան հարկանել, և մի սմն 'ի գործաւորաց մեռաւ անդ, և սպառնային մաշել զնոսա 'ի սուր սուսերի. զի դաւաճանութեամբ առիթ զբնակութիւնս մեր տային՝ և արարիք զմեզ թափառական, այժմ ոչ կամիք լսել ձայնի մերում, ահա զվանօրայս ձեր սահմանեմք 'ի բնակութիւն մեզ, և եթէ մեռանիլ իսկ հասանիցէ մեզ՝ պատրաստ եմք առ այն. և ընթացեալ լցան 'ի վանօրայս Ցունաց. և սանք մնացին 'ի տաճարին, և խնդրէին ընդ թարգմանն, զՓոխանորդն, զՅարտարապետն և զայլ գլխա-